



# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ

ՄԵՐ ՅԱԶՈՐԻ ԹԻՒՆ՝

ՈՒՐԲԱՆ,  
21 ՆՈՅԵՄԲԵՐ  
2003

«ԱՁԴԱԿ»Ի ՄԱՆԿԱՊԱՏՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

P. ՏԱՐԻ

ԹԻՒՆ 7 (19)

ՔՈԿՏԵՄԲԵՐ 2003

bezdlg\_mezdlg@hotmail.com

## ՊԱՐԵՆՔ ԿԵՐԱՍՈՒՑԻՆ ՈՒՐԱՍՈՒԹԻՒՆԸ

Վերամուտն անմիջապես առաջ շատ աշակերտներ կ'ունենան տարօրինակ դող մը: Այս չի նշանակեր, թէ անոնք կը վախնան կամ տխուր են, որ նորէն դպրոց պիտի սկսին յաճախել: Անոնք պարզապէս խանդավառ են եւ կը պզան, որ վերամուտի օրը կարելոր է:

Բիմա, որ քանի մը շաբաթ է Վեր դպրոց կը յաճախենք, արդէն իսկ անցած է այդ հաճելի դողը: Մեղմացած են նաեւ նոր գիրքերու, գրենական պիտոյքներու պատճառաւ խանդավառութիւնը, հին դասընկերներ եւ ուսուցիչները վերագրտնելու, եւ նորերուն ճանօթանալու ուրախութիւնը: Ամէն առտու կանուխ դպրոց երթալը դարձած է սովորական առօրեայ:

Սակայն գիտէք, որ կարելի է դպրոցին մէջ ապրիլ նորութիւններով եւ խանդավառութեամբ լեցուն պահեր: Նախեւառաջ, ձեր դասերը լաւ սորվելով, կը տեսնէք, թէ հարստացած էք նոր գիտելիքներով: Կարելի է նաեւ դպրոցէն դուրս ձեր սորված աշխատանքները ներկայացնել ուսուցիչներուն ու ընկերներուն եւ աշխուժօրէն մասնակցիլ ատենամարզանքի պահերուն:

## ՄԱՐԶԱՆՔԸ՝ ԴԱՍԻ ԿՈՊՔԻՆ

Մէկ, երկու, երեք, չորս...


Ես երկու շաբաթ է Վեր մարզանքի կը հետեւիմ, իսկ հիմա մկաններս կը տաքցնեն, որպէսզի շարժումներս դիւրին կատարեմ: Ամէնօրեայ մարզանքի հետեւելու որոշումս նոր տուի: Դպրոցական վերամուտի երկրորդ օրը մարզանքի դասապահն էր: Նախքան մարզանքի սկսիլը՝ ուսուցչուհին մեզի ըսաւ. «Առողջ միտքը, առողջ մարմնի մէջ կը գտնուի, իսկ առողջ մարմին ունենալու լաւագոյն ձեւը ամէնօրեայ մարզանքն է»:

Տուն վերադարձիս բաւական մտածեցի ուսուցչուհիիս ըսածին մասին եւ վայն ծիշդ գտնելով որոշեցի մարզանքի հետեւիլ: Մարզանքի պատճառով ինքզինքս աւելի կայտառ եւ առողջ կը պզամ: Կը պզամ նաեւ, որ միտքս ալ այնքան արթուն է, որ ուսուցիչներուն բոլոր բա-


ցատրութիւններուն կը հետեւիմ... առանց քնանալու:

Ըսեմ, որ կայ նաեւ մտքի մարզանքը: Այսինքն՝ հաշիւը, գոյ սորվիլը... մտքի մարզանքներ են:

Բիմա վերամուտ է: Փորձեցէք մարզանքի հետեւիլ՝ առանց գանգատելու մտքի մարզանքէն: Կարելոր է նաեւ մեր միտքը «տաքցնել»...



## ՎԵՐԱՍՈՒՑԵՆ ՔԱՆԻ ՄԸ ՕՐ ԱՌԱՋ...



ملحق از كتاب



ՄԱՐԳԱԿԱՆ

# ԼԻՐԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԱԹՈՆԸ՝ «ՌԱՆ ՊԵՅՐՈՒԹ ՌԱՆ»

Աշխարհի տարածքին բազմաթիվ քաղաքներ կը կազմակերպեն իրենց մարաթոնները:

Կիրակի, 19 հոկտեմբերին, Պեյրուս առաջին անգամ ըլլալով պիտի ունենայ իր մարաթոնի մրցումը, որ կը կրէ «Ռան Պեյրուս ռան» («Վապէ՛, Պեյրուս, վապէ՛») անունը:

Առաւօտեան ժամը 8:30էն սկսեալ լիբանանցի եւ օտար բազմաթիւ մարզիկներ պիտի վազեն 10 քմ. տարածութիւն մը: Անոնց վազքը պիտի սկսի Պեյրուսի Նահատակաց հրապարակէն եւ պիտի անցնի քաղաքին փողոցներէն: Անոնք երկու նուէրներ:



անգամ պիտի անցնին նոյն վազքուղիէն:

Պաշտօնական բնոյթ ունեցող եւ միջազգային գետնի վրայ ծանցուած այս մարաթոնը մեծ հետաքրքրութիւն կը ստեղծէ իր շուրջ:

«Ռան Պեյրուս ռան»ի յաղթականները պիտի ստանան նիւթական պարգեւներ: Մրցումը 8 ժամէն առաջ աւարտող մարզիկները պիտի ստանան յատուկ մետալներ եւ վկայագիրներ: Իսկ մարաթոնին բոլոր մասնակցողներուն պիտի յանձնուին յիշատակի յատուկ

## ԻՆՉ Է ՄԱՐԱԹՈՆԸ

Մարաթոնը վազքի ամէնէն երկար մրցումն է, որուն տարածութիւնը 42 քմ. 195 մետր է:

Մարաթոն բառը հին Յունաստանի, մէկ շրջանին անունն էր: Յոյն մը պարսիկներուն դէմ տեղի ունեցող պատերազմին մասին Աթէնքի իշխանութեան լուր հասցընելու համար Մարաթոն շրջանէն մինչեւ Աթէնք վազած է եւ ապա՝ մահացած:

Ներկայիս մարաթոնի մասնակցիլ ուլող մարզիկները պէտք է ըլլան 18 տարեկան:

10 քմ. տարածութիւն ունեցող մարաթոնը կը նկատուի հաճոյքի համար կատարուած մարզախաղ մը: Անիկա յաճախ կ'ունենայ բարեսիրական նպատակ: 10 քմ. մարաթոնները նաեւ պատրաստութեան ու փորձի միջոցներ են բուն մարաթոնին մասնակցիլ ուլող մարզիկներուն համար:

## ՄԻՆԻ ՄԱՐԱԹՈՆ

հետաքրքրական է մանուկներու եւ պատանիներու համար գոյութիւն ունեցող մարաթոնը, որ կը կոչուի մինի մարաթոն: 4.26 քմ. տարածութիւն ունեցող այս մրցումին կրնան մասնակցիլ 11-17 տարեկան մարզիկները:

Պեյրուսի մարաթոնին ճիւղն ներս կիրակի, 19 հոկտեմբերին, տեղի պիտի ունենայ նաեւ մինի մարաթոն մը:

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

-Կիրակի, 12 հոկտեմբերին, Մայքըլ Շումպերը Յոյ անգամ ըլլալով դարձաւ Ֆորմիլա 1ի աշխարհի ախոյեան: Գետաքրքրական է, որ գերմանացի վարորդը Ճափոնի մէջ տեղի ունեցած այս մրցումը աւարտեց Յոյ



դիրքի վրայ: Սակայն ան ունէր կէտերու ամէնէն բարձր դասաւորումը՝ 93 կէտ: Կարենոր է նշել, որ զարդ Ֆորմիլա 1ի ոչ մէկ վարորդ կրցած է վեց անգամ աշխարհի ախոյեան դառնալ:

- Քենիացի մարզիկ Փօլ Թերկաթ նուաճած է նոր մրցանիշ մը, երբ Պերլինի մարաթոնին տարածութիւնը վազած է 2 ժամ, 4 վայրկեան եւ 55 երկվայրկեանէն: Ան միայն մէկ մեծ ոստումով գերազանցած է երկրորդ հանդիսացած իր հայրենակից Սամի Քորիրը:

- Մարզիկներ իրաւունք չունին գործածելու կարգ մը նիւթեր, որոնք խթանիչ ազդեցութիւն կ'ունենան իրենց վրայ, այսինքն արուեստականօրէն կը բարելաւեն իրենց արդիւնքները: Մինչեւ վերջերս այս արգիլուած նիւթերուն մաս կը կազմէին սուրճը եւ անոր ընտանիքը: Ներկայիս նոր ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, թէ մարզիկները կրնան սուրճ խմել:


## ՊԵՅՐՈՒԹԻ ՆՈՐ ՓԱՐՈՍԸ

Պեյրուս օժտուեցաւ իր պատմութեան երրորդ փարոսով: Արդիական այս փարոսը եւս կը գտնուի քաղաքին ճովեպերեայ Այն Մըրէյսէ շրջանին մայր ծամբուն վրայ, հին փարոսէն քիչ մը անդին:

Նոր փարոսին բարձրութիւնը 60 մետր է: Անիկա կ'աշխատի ամբողջովին ինքնագործ ձեւով, օժտուած է էլեկտրական երկու շարժակներով, որոնց շնորհիւ

կրնայ առանց էլեկտրականութիւն ստանալու աշխատիլ յաջորդական երեք օրեր շարունակ: Անոր լոյսը նոյնիսկ փոթորիկի ընթացքին ճովուն կողմէն պիտի տեսնուի աւելի քան 22 քմ. հեռաւորութենէն:

Յիշենք, թէ հին փարոսին բացումը կատարուած էր 1957ին: Անիկա կը փոխարինէր շատ աւելի հին փարոս մը, որ շինուած էր 1862-1864 թուականներուն:





ԱՅՈՒՄՈՂ

# ԱՔՐԷՏ ՆՈՊԷԼԻ ՆՈՒԷՐԸ՝ ՆՈՊԷԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐԸ



Ամէն տարի հոկտեմբերին կը բաժնուին Նոպէլեան մրցանակները: Անոնք կը տրուին այդ տարուան ընթացքին գրական եւ գիտական մարդերու մէջ աշխարհին օգտակար դարձած մարդոց:

Մրցանակը կը կոչուի իր հիմնադիրին՝ շուէտացի գիտնական Ալֆրէտ Նոպէլի անունով: Իր կարգին, Ալֆրէտ Նոպէլ կարենոր դեր խաղացած է գիտութեան մէջ, երբ 1876ին հնարած է ուժանակը (տինամիթ): Սակայն ան շուտով անդրադարձած է, թէ իր գիտը, շատ օգուտներու կողքին, կրնայ նաեւ մեծ վնասներ պատճառել մարդկութեան եւ սպաննել հազարաւորներ: Բետեաբար ան իր հարստութիւնը ձգեց յատուկ հաստատութեան մը, որ 1901էն ի վեր իրաքանչիւր տարի մրցանակ եւ նիւթական նուէր կու տայ ամբողջ մարդկութեան օգտակար դարձող մարդոց:

Նոպէլեան մրցանակը կը բաղկանայ վեց բաժիններէ՝ գրականութեան, բժշկագիտութեան, խաղաղութեան, բնագիտութեան, քիմիագիտութեան եւ տնտեսագիտութեան մրցանակներ: Մրցանակակիր անձերը կ'ընտրուին Ճուէտի Գիտութեան եւ գրականութեան ակադեմիաներուն կողմէ: Սակայն խաղաղութեան մրցանակը կը յանձնուի Նորվեկիոյ խորհրդարանին կողմէ:

Այս տարի գրականութեան Նոպէլեան մրցանակը ստացաւ հարաւափրիկեցի գրագետ Ճէ. Էմ. Քոթչի: Ան իր գիրքերուն մէջ փորձած է գտնել սխալին եւ ճիշդին իմաստը: Բժշկագիտութեան մրցանակին տիրացան ամերիկացի գիտնական Փօլ Սի. Լաուրըրը եւ բրիտանացի գիտնական Փիթըր Մենսֆիլտ: Անոնք աշխատած էին բժշկական էմ. Ար. Էյ. քննութեան գործիքին վրայ եւ վայն դարձուցած էին նուազ ցաւ պատճառող եւ աւելի ճշգրիտ քննութիւն մը:

Բնագիտութեան Նոպէլեան մրցանակը ստացան բնագետներ Ալեքսէյ Ապրիքոսով, Վիթալի Կինզլըրը եւ Անթոնի Լեկէթ: Ամերիկացի երկու գիտնականներ՝ Փիթըր Ակրի եւ Ռուդըրիք Մըքնըն ստացան քիմիագիտութեան մրցանակը: Անոնք գտած են, թէ ինչպէս մարմնին բջիջները իրարու հետ կապ կը պահեն: Տնտեսագիտութեան մարդին մրցանակը բաժնեկցեցան ամերիկացի Ռուդըրթ Էնկըլը եւ բրիտանացի Քլայւ Կրէյն-ճըր:

Բետաքրքրական է խաղաղութեան մրցանակին պարագան, կոր առաջին անգամ ըլլալով կը ստանայ իսլամ կին մը: Իրանցի Ճիրին Էպատի մեծ աշխատանք տարած է կիներու եւ մանուկներու իրաւունքներու պաշտպանութեան համար եւ միշտ պաշտպանած է խաղաղութիւնը:

Գրականութեան մրցանակը ստացաւ Էմ. Ար. Էյ. քննութեան գործիքին վրայ եւ վայն դարձուցած էին նուազ ցաւ պատճառող եւ աւելի ճշգրիտ քննութիւն մը:

## ՆՈՊԷԼԵԱՆ ԿԵՂԾ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ԱԾՈԱՏԱՆՔՆԵՐ

13 տարիէ ի վեր երգիծական «Անալ օֆ իմփրապըպըլ ռիսըրը» թերթը եւ Միացեալ Նահանգներու հարվըրտ համալսարանը կը բաժնեն քննադատ մրցանակները: Անոնք կը յանձնուին անոնց, որոնց աշխատանքները նախ եւ առաջ կը խնայեն մարդիկը եւ ապա մտածել կու տան:

Այս տարի քննադատներով վարձատրուած աշխատանքներէն նշենք «հաւերը կը նախընտրեն

գեղեցիկ անձերը», «Աղանիները չհետաքրքրող արձանը» (քիմիագիտութեան մրցանակ), «Լոնտոնի թաքսիի վարորդներուն ուղեղները աւելի աճած են, քան իրենց քաղաքակիցներունը» (բժշկութեան մրցանակ), «Ամէնօրեայ կեանքի տարօրինակ սովորութիւններ. պէյսպոլի գլխարկները դէպի ետեւ դնող մարդոց տոկոսը» (գրականութեան մրցանակ):

## ԱՌԱՆՅ ԲԵՌԱՏԵՍԻԼԻ...

Պահ մը երեւակայէ, որ սկովտիացի Ճոն Լոճիք Պէյրտ 23 Յունուար 1926ին աշխարհին չներկայացներ իր գիտը՝ առաջին հեռատեսիլը: Առանց հեռատեսիլի ինչպէս պիտի ըլլար քու առօրեայ: Բաւանաբար աւելի ժամանակ տրամադրէիր ընտանիքիդ անդամներուն հետ խօսակցելու, կարդալու, գրելու, խաղալու եւ մտածելու: Իրողութիւն է, որ այսօր, մը առանց հեռատեսիլի»

հեռատեսիլի կողքին, մեզ կը պահեցնեն ելեկտրոնային խաղերն ու համակարգիչը: Բախտաւոր ենք, որ այս բոլոր կարելիութիւնները ունինք, սակայն մեզմէ կախեալ է անոնց չափաւոր գործածութիւնը՝ այլ ժամանակներ ունենալու եւ այլ կարողութիւններ վարձապանելու համար: Այս ճիւղէն ներս 1994ին Բանատայի մէջ սկսաւ «Ճաբաթ Բանատայի հեռատեսիլի»

արշաւը, որ մեծ յաջողութիւն գտաւ: Ճաբաթ մը հեռատեսիլը մարած պահելով՝ մարդիկ սկսան այլ ժամանակներ ունենալ: Բանատայի տարբեր քաղաքներու մէջ այս նոյն որոշումը կը փորձեն գործադրել նաեւ ելեկտրոնային խաղերու եւ համակարգիչներու համար: Այս մասին նոյնիսկ դպրոցներու մէջ տեղի կ'ունենան վրոյցի պահեր եւ հարցախոյզներ:

## ՔԱՊԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

- 7 հոկտեմբերին իսրայէլեան ուղղաթիռներ ռաբակոճեցին հարաւային Լիբանանի մէկ գիւղը՝ սպաննելով լիբանանցի մանուկ մը եւ ճանրօրէն վիրաւորելով անոր եղբայրը: Կիրակի, 5 հոկտեմբերին, իսրայէլեան օդանաւեր ռաբակոճած էին Դամասկոսէն 15 քմ. հեռու գտնուող վայր մը:

- «Թըրմինէյթը» ժապաւէններու շարքին հերոսը՝ Առնոլտ



Ճվարցենեկըր ընտըր-ւեցաւ Միացեալ Նահանգներու Քալիֆորնիա նահանգի կառավարիչ: Ան իր պաշտօնը պիտի ստանձնէ Նոյեմբերի վերջը:

- հոկտեմբերի սկիզբը Լիբանանի խորհրդարանը կատարեց 2004ի պետական պիտօճէի նախագիծին քննարկումը:

- 19 տարուան բացակայութենէ ետք Միացեալ Նահանգներ դարձեալ մաս կազմեցին ՄԱԿի ուսման եւ գիտութեան ԵՈՒՆԵՍԿՕ կազմակերպութեան:



ԱՅԼԱԶԱՆ

## ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

### Յ ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՁ

«Ճատ կը սիրեմ սորվիլ եւ սորվեցնել: Ապագային պիտի ուզէի ուսուցիչ ըլլալ»։ Կը բացատրէ Յ տարեկան Սուպրաթա Սուրատա: Նախակրթարանի այս աշակերտը նախիր հօր եւ մօր սորվեցուցած է գրել եւ կարդալ պենկալի լեզուն: Իսկ հիմա ան կը դասաւանդէ իր շրջանէն քանի մը տասնեակ կիներու: Սուպրաթա կ'աշխատի կամաւոր ձեւով, դաստիարակչական յատուկ ճրագիրի մը հետեւելով:

### ԻՐԱՆՑԻ ԴԱՏԱՒՈՐՆԵՐԸ ԴՊՐՈՑ Կ'ԵՐՔԱՆ

Իրանցի դատաւորները պէտք է վերադառնան դպրոց՝ գեղագրութեան դասեր առնելու համար: Բակառակ դատարաններուն մէջ համակարգիչի ներկայութեան, իրանցի դատաւորները կը շարունակեն իրենց որոշումները գրել ձեռքով: Դժբախտաբար, սակայն, անոնց գիրերը յաճախ անընթեռնելի են:

Նշենք, թէ Իրանի դպրոցներուն մէջ գեղագրութեան ուսուցումը պարտաւորիչ է:

### ԲԱՐՍՈՆԻՔԱՆԵՐՈՒ ՆՈՒԱԳԱՒՈՒՄՔ

Աւելի քան 900 երաժիշտներ հաւաքուած են կազմելու համար հարմոնիքայի ամէնէն մեծ նուագախումբը եւ կոտրելու «կիներ» մրցանիշներու գիրքին մրցանիշը: Անոնք միասին նուագած են տասը վայրկեան՝ մեկնաբանելով ձեռք երաժշտութենէն «Ուէն տը սէյնթ Կօ մարշին» («Երբ սուրբերը կ'արշաւեն») գործը:

Այս նուագախումբը կազմակերպողը յայտարարած է, թէ մրցանիշը կոտրելու կողքին, իր նպատակը եղած է նաեւ մարդոց մօտ հետաքրքրութիւն ստեղծել փոփ երաժշտութենէ վատ այլ երաժշտութեան մը նկատմամբ, ինչպէս նաեւ՝ տարածել «պլուզ» երաժշտութիւնը:

Նախկին մրցանիշը կը պատկանէր անգլիացի 84 երաժիշտներու, որոնք 2000 թուականին նուագած էին Սայմըն էնտ կարֆանքըլի «Սքարպորու ֆէր» երգը:

## ԾՈՎԵՐՈՒ ՆՈՐ ԲՍԿԱՆ՝ ՔՈՒԻՆ ՄԷՅՐԻ 2



Այս նաւը երեք անգամ աւելի մեծ է Թայթանիքէն, ունի հինգ Պոյինկ 747 օդանաւի երկայնք եւ իր անձնակազմի 1310 անդամներուն կողքին կրնայ ընդունիլ 2620 ճամբորդ:

Քուին Մէյրի 2 նաւը աշխարհի ամէնէն մեծ նաւն է: Զբօսաշրջական այս յատուկ նաւը շինուեցաւ երկու տարուան ընթացքին՝ Ֆրանսայի Պրիթանիա շրջանին մէջ: Անոր ճախսերը հասան 762 միլիոն եւրոյի:

Քուին Մէյրի 2 նաւը իր առաջին ճամբորդութիւնը պիտի կատարէ 12 Յունուար 2004ին:

## ՊԱՐՊԻԻ ՓՈՒԱՐԷՆ՝ ԴԱԶԱՆ

Միացեալ Նահանգներու, Քանատայի, Սինկափուրի եւ Գերմանիոյ մէջ արդէն իսկ սկսած է ճախուիլ Բազան պուպրիկը: Իսլամ փոքրիկներու կրօնին եւ մշակոյթին աւելի յարմարող այս պուպրիկը ունի երկար հագուստ, իսկ գլխուն կը կրէ լաչակ մը:

Առայժմ կան խարտեաշ, սեւահեր եւ սեւամորթ ռազաններ: Կը ճրագրուի բազմապնել Բազանի ընտանիքը եւ վայն տարածել նաեւ Միջին Արեւելքի մէջ:



### ԻՐԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ԳՏՆՈՒԱԾ ԲՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրանի հարաւ-արեւելքը գտնուող եւ լեռներով պատուած շրջանի մը գիւղացիները գտած են հազարաւոր առարկաներ՝ անօթներ, գաւաթներ, սափորներ եւ այլն: Գտնուած հնութիւններուն վրայ կարելի է տեսնել տարօրինակ նախշեր, Արեւելքի մէջ մեկի ճանօթ ամէնէն որոնք կը ներկայացնեն հնդկական հին քաղաքակրթութիւնը Միջագետեան, կիներու գլուխներ, իրարու քիմն է, ներկայ Իրաքի շրջանը: փաթեթուած օճեր եւ իրարու դէմ



կռուող առասպելական անասուններ:

Ըստ հնագէտներուն, այս առարկաները կը պատկանին 5000 տարի առաջ գոյութիւն ունեցած քաղաքակրթութեան մը:

Նշենք, որ Միջին Արեւելքի մէջ մեկի ճանօթ ամէնէն որոնք կը ներկայացնեն հնդկական հին քաղաքակրթութիւնը Միջագետեան, կիներու գլուխներ, իրարու քիմն է, ներկայ Իրաքի շրջանը: փաթեթուած օճեր եւ իրարու դէմ




ԿԵՆՊԻՆ

# ՓԻՊԵՐՆ ԱԼ ԲԱՆԳԻՍԵՏԻ ԻՐԱԽՈՒՆՔ ՈՒՆԻՆ

Բնդկաստանի Քիրալա նահանգին մէջ վերջերս պաշտօնապէս յայտարարուեցաւ, որ փիղերը 65 տարեկանին կրնան աշխատել դադրիլ եւ հանգստեան կոչուիլ: Այս նահանգին մէջ փիղերը չարաչար կ'օգտագործուին ճանր գերաններ փոխադրելու համար:

Պէտք չէ մոռնալ, որ Բնդկաստանի հինտուներուն համար փիղը սուրբ անասուն է, որովհետեւ անոնց չաստաճը ունի փիղի գլուխ:

Մալեպիոյ Սապահ քաղաքին մէջ վերջերս գիտնականներուն ուշադրութիւնը գրաւած է «թպուկ» փիղերու տեսակ մը: Անոնք սովորական փիղերէն փոքր են, աւելի ընտանի են եւ ու-



նին մեծ ականջներ ու երկար պոչ: Գիտնականներուն համաձայն, շատ կարեւոր է փիղի այս տեսակը պաշտպանել, որովհետեւ անոնք թիւով քիչ են:

ԳԻՏԵՐՈՐ, ԽԹ...

Ափրիկէի մէջ փիղերուն թիւը աւել-

ցած է շնորհիւ փղոսկրի առեւտուրը արգիւղ օրէնքին:

Ասիոյ փիղերը, որոնք փղոսկր չունին, կը սպաննուին... մարդոց հետ կռիւներու պատճառով: Մարդիկ իրենց տունները կը շինեն փիղերու բնակավայրերու մէջ: Այս պատճառով անոնց եւ փիղերուն միջեւ կայ պայքար մը, որուն պատճառով կը սպաննուին մարդիկ եւ փիղեր:


## ՓԻՊԻՆ ԾԱՃԱՅՈՒՅԱԿԸ

Մանուկ փիղը կը խմէ իր մօր կաթը: Չափահաս դառնալէն ետք ան կրնայ ուտել օրական... 250 քկ. խոտ, տերեւ եւ ծիւղ:

## ՎԵՐԱՄՈՒՏ



## ՅԱՅՏՆԱԲԵՐԷ ՉԱԿԻԴ ՊԱՀՈՒԱԾ ՉԻՐՔԸ



ԱՐՉԱՆԳՐՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ  
ԱՆԹԻԼԻԱՍ,  
ՄՉՀԷՐԻ ՇՐՉԱՆ  
ՀԵՌ. 03-944686

## ՃԱՐԺԱՊԱՏԿԵՐ

Ճարժապատկերի սրահներուն մէջ կը յուսադրուին մանուկներն ու պատանիները հետաքրքրող հետեւեալ երկու ժապաւէնները.

### ★«Սինպատ»

Բամակրեյի գող-հերոսին պատմութիւնները ժապաւէնի վերածող այս կենդանի գծանկարին մէջ գլխաւոր հերոսներուն ձայները կը պատկանին նշանաւոր դերասաններու, ինչպէս՝ Պրէտ Փիթ, Քէթրին Ջեթթ-Ճոնսոն եւ Միշէլ Փֆայֆըր: Սինպատ նա-



ւէ մը կը գողնայ կախարդական գիրք մը: Չար աստուածուհի էրիս Սինպատէն կը գողնայ գիրքը, եւ հերոսը աշխարհին ճայրը կ'ուղղուի ետ առնելու համար իր գանձը:

### ★«Ուաթ է կըրլ ուոնթը»

Ամերիկացի պարմանուհի մը Լոնտոն կ'երթայ տեսնելու համար իր հայրը: Այս վերջինը, սակայն, պիտի ամուսնանայ ուրիշ կնոջ մը հետ, որ իր աղջկան հետ կը փորձէ ետ դրկել հերոսուհին: Ծիծաղաշարժ տեսարաններով հարուստ այս ժապաւէնը կրնայ հետաքրքրել պատանիները:





ՔՈՒԿԱՍԻ

# ԳՆԱԿԱՏԵՆՔ ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Բոկտեմբերի երկրորդ ճաբաթը կը տօնենք Թարգմանչաց տօնը:

Սակայն որո՞նք են այս թարգմանիչները, որոնք կը յարգուին եւ կը յիշուին դարերէ ի վեր:

Բնականաբար ձեզի ճանօթ է 404-406 թուականներուն Մեսրոպ Մաշտոցի գիրերու գիտը: Մինչեւ հայերէն Աբուլբե-նի գիտը հայաստանի մէջ գիրքերը յունարէն, ասորերէն կամ պարսկերէն էին: Գիրերու գիտին կը յաջորդէ կարեւոր շարժում մը, երբ բոլոր հայ գրողները՝ մատենագիրները կը սկսին հայերէնի թարգմանել իրենց գործածած գիրքերը:

Ասիկա կարեւոր է մեր գրականութեան մէջ, որովհետեւ թարգմանչաց կամ թարգմանիչներու շարժումին շնորհիւ է, որ մենք ներկայիս ունինք հայկական գրականութիւն եւ գիր-քի մշակոյթ:

Մեսրոպ Մաշտոցի կողքին նշանաւոր թարգմանիչներէն են անոր աշակերտներէն եպնիկ Կողբացի, Կորիւն Սքանչելի եւ ուրիշներ:



## ԳԻՐՔԻ ՅՈՒՑԱԿԱՆԴԷՍ

Ամէն աշնան Կիլիկիոյ կաթողիկոսարանի գրատունը կը կազմակերպէ հայ գիրքի նուիրուած ցուցահանդէս մը: Այս տարի ցուցահանդէսը տեղի պիտի ունենայ 22 Բոկտեմբերէն մինչեւ 30 Նոյեմբեր: Այս տարի հայ գիրքի ցուցահանդէսը կը տօնէ իր 25րդ տարեդարձը:

Պիտի ցուցադրուին լիբանանահայ բոլոր հրատարակչատուներէն եկած գիրքեր: Բետաքրքրական է, որ այս գիրքերը կը վաճառուին շատ մեծ վեղչերով:

Նշենք, որ հայ գիրքի ցուցահանդէսին մէջ կարեւոր բաժին մը կը յատկացուի մանկապատանեկան գրականութեան: Բոն կը ցուցադրուին եւ կը վաճառուին հայկական մանկապատանեկան գրականութեան հին թէ նոր հրատարակութիւնները:

Բետեւաբար նոր գիրքերու ճանօթանալու եւ անոնցմով հարստանալու համար կ'արժէ այցելել գիրքերու ցուցահանդէսը, որ այս տարի եւս ունի նուէրներ եւ անակնկալներ:

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹԱԳՈՒԿԻՆ

Գիտէ՞ր, թէ հայերէնի թարգմանուած առաջին գիրքը եղած է «Աստուածաշունչ»ը: Մեսրոպ Մաշտոցի եւ իր աշակերտներուն կողմէ եղած այս թարգմանութիւնը տեւած է 30 տարի: Իր գեղեցիկ թարգմանութեան համար ան կը կոչուի «Թագուհի թարգմանութեան» կամ «Թարգմանութիւններու թագուհին»:

Իսկ հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը Բետեւեալն է. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», այսինքն՝ «Ծանօթանալ իմաստութեան եւ գիտութեան, գիտնալ հանճարին խօսքերը»:



## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԴՈՐ ԳԱՅԻԱՆԷ ՊԱՐԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՄՈՒՏ

Շաբաթ, 18 Դեկտեմբեր կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Լեւոն Շանթ կեդրոն:

Նորեկ աշակերտներու արձանագրութիւն՝ նոյն օրը, կէսօրուան ժամը 12:00ին:

Ծանօթ.- կ'ընդունուին 5 տարեկանը ամբողջացուցած երեխաները:  
ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱԴՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

Էջ Յի վրայի ժամանակացոյցը կտրէ եւ խաւաքարտի մը վրայ փակցուր: Անոր վրայարձանագրէ շաբթուան պահերդ, եւ վայն կախէ սենեակիդ պատին վրայ:





ՀՊՈՒՑԱԿԻՆԻ

ՄԻՋ -

## ԴԻՏԱԿ


Առատ գիտելիքներ, Կանաչան նիւթեր,  
Աշխարհին մասին այլապան լուրեր,  
Մանրամասն տեղեկութիւններ,  
Զարգանալու լաւագոյն ընկեր:

Տարբեր լեզուով յայտագիրներ,  
Փորրիկներու յարմար խաղեր,  
Ճանչնալու համար աշխարհը՝  
Կրնաս օգտագործել... դիտակը:


Քալիկ Լատոյեան,  
12 տարեկան



Սարինէ Գրիգորեան,  
10 տարեկան



Սարին Սվաճեան,  
9 տարեկան



## ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ

### Ժամանակացոյց

	ԵՐԱՌՈՒՅԱՐԻՑ	ԵՐԵՐՅԱՐԻՑ	ՉՈՌԵՐՅԱՐԻՑ	ԴԻՆՉԱՐԻՑ	ՈՒՐԲԱԹ	ՇԱՐԱԹ
8:00						
9:00						
10:00						
11:00						
12:00						
13:00						
14:00						
15:00						

